

ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱԶՔԱՐԵՐԸ ԵՎ ՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ²³

Հենրի Մատինյան

Բանալի բառեր՝ Հայաստան, Լեհաստան, հայ-լեհական հարաբերություններ, հայ-կական խաչքարեր, լեհահայ համայնք, լեհահայոց թեմ, հայ մշակույթ, հայ-լեհական բարեկամություն, լեհահայ ժառանգություն, հայկական փողոց, հայկական հրապարակ:

Հայրենի երկրի սահմաններից դուրս կանգնեցված խաչքարերը տեղի հայ համայնքի կենսունակության և ազգային պահպանաման քարե վկաներն են: Ի թիվս հայկական սիյուոքի այլ երկրների, Լեհաստանի Հանրապետությունում հայությունը կերտել է մեկ տասնյակից ավելի խաչքարեր, որոնց գերակշիր մասը նվիրված է հայ-լեհական բարեկամությանը և Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Խաչքարեր տեղադրվել են այն վայրերում, որտեղ հայկական համայնքն առավել ակտիվ է, պահպանել է իր ազգային դիմագիծն ու մշակությունը: Լեհահայ համայնքի պատմության և մշակույթի գիտակ Զքիգնն Շնուրլոյի վկայությամբ, «կանգնեցված խաչքարերը լեհահայության հպարտությունն են և դարձել են նրանց ուխտատեղին, աղոթատեղին, մի վայր, որտեղ վերջիններս գալիս են խոստովանության և պարզապես ընկերական համբաւումների»[1]:

Լեհաստանի տարածքում առաջին հայկական խաչքարը տեղադրվել է պատմական Կրակով քաղաքում տեղի հայ համայնքի և Եկեղեցական թեմի, հայագիտությամբ գրադպու մի խումբ լեհ հետազոտողների նախաձեռնությամբ և քաղաքի ղեկավարության աջակցությամբ՝ կաթոլիկ Սուրբ Միկոլայ Եկեղեցու բակում: Եկեղեցու ընտրությունը պատահական չէր, քանի որ այնտեղ հայ հոգևորականները պարբերաբար կատարում էին Եկեղեցական արարողություններ, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված պատարագ, որին մասնակցում էին լեհահայերի հոգևոր առաջնորդները, հայ համայնքի և քաղաքի ղեկավարության ներկայացուցիչները [2]: 2003 թվականի ապրիլին տեղի ունեցած հերթական պատարագից հետո որոշում ընդունվեց Եկեղեցու բակում ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձան կանգնեցնել: Այդ որոշումը լայն արձագանք գտավ մամուլում, որտեղ 2004 թվականի ապրիլի սկզբից ակտիվորեն քննարկվում էր խաչքար-հուշակոթողի տեղադրման մտադրությունը [3]: Այդ որոշման դեմ կտրուկ հանդես եկավ Լեհաստանում թուրքիայի դեսպանը, ով պետական և հոգևոր քարձրաստիճան մի խումբ անձանձ պաշտոնական բողոք հայտնեց խաչքարի վրա գրվելիք ցեղասպանություննե ներույթի կապակցությամբ: Կրակովի հշխանություններն ու կաթոլիկ Եկեղեցին տեղի չտվեցին թուրքական դիվանագետների ճնշումներին [4], իսկ հայ կաթոլիկներ Եկեղեցու հարավային թեմի առաջնորդ Թատենուշ Խակովիչ-Զալեսկին բաց նամակով հորդորեց նրանց դադարեցնել այդ գործին խարճվելու փորձերը: Նա վկայակոչում էր Լեհաստանի նախագահ Ալեքսանդր Կվասնևսկու՝ 2001 թվականի նոյեմբերի 15-ին Երևանի Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում հնչեցրած խոսքերը. «1915 թվականի Հայոց ցեղասպա-

²³ Հոդվածն ընդունվել է 24.02.18:

Հոդվածը տպագրության է երաշխավորել Վանաձորի Հ.Թումանյանի անվ. Ժետական համալսարանի պատմության ամբիոնը:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

նությունը փաստ է: Մենք՝ լեհերս, քաջ գիտակցում ենք՝ ինչ է կատարվել»[5]: Այդ օրերին, լեհական «Զիենանիկ Պոլսկի», «Գազետա Վիբորգա», «Գազետա Կրակովսկա» թերթերում, Պրահայում լույս տեսնող հայկական «Օրեր» ամսագրում հայկական խաչքարի տեղադրման հարցն ամենից շատ քննարկվողներից էր [6]:

Խաչքարի նախագծի հեղինակը ազգությամբ լեհ ճարտարապետ և արվեստագետ Յաշեկ Խոժնչևսկին է, ով Կրակովի հայ մշակութային ընկերության ամդամ է և երկար տարիներ գրադպուտ է Լեհաստանում հայկական ճարտարապետության և արվեստի ուսումնասիրությամբ, հեղինակ է այդ թեմային նվիրված մի շարք գրքերի: Նախագիծը հաստատվեց 2003 թվականի հոկտեմբերի 18-ին, իսկ խաչքարի կերտման աշխատանքներն սկսվեցին նույն թվականի դեկտեմբերի 3-ին: Խաչքարը կերտելու գործը վստահվեց լեհ քարագործ վարպետ Ստանիսլավ Յեկերային[7]: «Անհիվ» ամսագրում հրապարակած հոդվածում[8] Յ. Խոժնչևսկին մանրամասն ներկայացնում է խաչքարի տեղադրման պատմությունը: 2004 թվականի ապրիլի 7-ին ենթեցու տարածքում դրվեց խաչքարի պատվանդանի հիմքը, որի վրա ապրիլի 16-ին տեղադրվեց բաց դեղնավուն ավազաքարից կերտված խաչքարը: Հաջորդ օրը՝ ժամը 16:00-ին, Թալենուշ Խակովիչ-Զալեսկին Սր. Միկոլայ Եկեղեցում կատարեց օրինության կարգ՝ Սուրբ պատարագ, որից հետո Կրակովի միտրոպոլիտ կարդինալ Ֆրանցիշեկ Սախարովին օժեց խաչքարը [9]: Արարողության ընթացքում Հռոմի պապ Հովհաննես Պողոս Երկրորդի կողմից հատուկ հայերի համար ուղարկված աղոթքը ընթերցեց հայկական արմատներով հայտնի դերասանուի Աննա Դիմնան[10]: Արարողությանը ներկա էին հայկական հին և նոր համայնքի հարյուրավոր ներկայացուցիչներ և բազմաթիվ լեհեր, այդ թվում՝ Կրակովի Հայկական մշակութային ընկերության նախագահ Ալեամ Տերլեցին, քաղաքի դեկապարության ներկայացուցիչներ, արվեստագետներ և այլք: Լեհաստանում Հայաստանի դեսպան Աշոտ Հովակիմյանը, թեպետ տարակուսանք էր հայտնել խաչքարի վրա գրվելիք տեքստի որոշ արտահայտությունների հետ կապված, բայց մասնակցելով արարողությամբ, նշեց: «Ճշմարտությունը ամենից կարևոր է, և մենք չենք վախենում ասել այն: Մենք հավաքվել ենք այստեղ ոչ թե ատելության, այլ մահացածների հիշատակը հավերժացնելու համար»[11]:

Խաչքարի ճակատային մասին հայերենով և լեհերենով գրված է. «Հայերին», իսկ դարձերեսին լեհերենով փորագրված է. «Այս խաչքարը կամ «խաչի քարը» հայկական «Ժահկող խաչի» հետ մեկտեղ հավերժացնում է այս հայերի հիշատակը, ովքեր 14-րդ դարից սկսած ապրել են Լեհաստանում և ունեցել են մեծ ավանդ Ուչ Պոսպոլիտայի առջև: Հուշարձանը նվիրված է նաև Թուրքիայում 1915 թվականին հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանության զրիերին. հայերին ու լեհերին՝ խոշտանգված ուկրաինական ազգային բանակի ազգայնամուների կողմից 1944 թվականի ապրիլի 19-21-ը Կուտիկում՝ Զերենոշայի մոտ, 1945 թվականի հունվարի 15-20-ը՝ Բուկովինայի Ռուսկի Բանիլովյայում, ինչպես նաև սահմանամերձ այլ վայրերում. հայ կաթոլիկ քահանաներին՝ ծերբակալված, սպանված և աքսորված Սիրիի խորհրդային բռնապետական ուժերի կողմից երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում»[12]: 2005 թվականի հունվարի 26-ին ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը Կրակով կատարած այցելության ժամանակ ծաղկեապսակ խոնարհեց նոր կանգնեցված խաչքարին, իսկ Կրակովի մետրոպոլիտ կարդինալ Ֆրանցիշեկ Սախարովուն՝ հայ-լեհական փոխհարաբերությունների ամրապնդման և զարգացման գործում զգալի ավանդ ունենալու համարն ՀՀ նախագահ Ռոշարյանի անունից հանձնեց Միսիթար Գոշ մեդալ [13]:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Հայկական երկրորդ խաչքարը կանգնեցվեց Լեհաստանի հյուսիսային Էլբլոնգ քաղաքում, որը պատրաստվել էր Հայաստանում՝ հայկական կարմիր տուֆից [14]: Խաչքարի հեղինակը երևանցի քանդակագործ Ռոբերտ Հովհեն Հովսեփյանն է: Այն տեղադրվեց Աստվածային ողորմածություն եկեղեցու դիմաց: Խաչքարի օրինության արարողությունը տեղի ունեցավ 2005 թվականի հոկտեմբերի 30-ին, որին մասնակցեցին կաթոլիկ եպիսկոպոս Յան Յիշչակ և հայ կաթոլիկ եկեղեցու առաջարկող Արքուր Ավդայանը: Խաչքարը նվիրված է հայ-լեհական քազմադարյա բարեկամությանը, Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցին և Մեսրոպ Մաշտոցի կողմից հայոց գրերի ստեղծման 1600-ամյակին [15]: Խաչքարը կերտելու հարցում իրենց ներդրումն են ունեցել քարը ձեռք բերած «Աժ պատգամավոր Աղասի Արշավյանը, ինչպես նաև Ալլա անունով մի հայուիի, ով իր մեքենայով խաչքարը Երևանից տեղափոխել էր Լեհաստան:

Թվով երրորդ խաչքարը կանգնեցվեց Լեհաստանի հայության կենտրոններից մեկում՝ ծովափնյա Գդանսկ քաղաքում: Այն հանդիսավոր պայմաններում տեղադրվեց և օծվեց Սուլր Պետրոս և Պողոս եկեղեցու դիմաց՝ 2009 թվականի հոկտեմբերի 7-ին [16]: Խաչքարի տեղադրման վայրի ընտրությունը պատահական չէր: Այստեղ 1958 թվականին հաստատվել էր լեհահայ քահանա Կաժմինժ Ֆիլիպիակը՝ իր հետ բերելով Սուտանիսավովի հայկական եկեղեցում պահպող Նրագեղ Աստվածամոր պատկերը: Եկեղեցու հարակից փողոցը, որտեղ տեղադրվեց խաչքարը, հետագայում ստացավ հայկական փողոց անվանումը: Խաչքարը, որի հեղինակը քանդակագործ Տարոն Մարտիրոսյանն է, քանդակված է հայկական վարդագոյն տուֆից զարդարված հայկական ավանդական նախշերով: Խաչքարը հայկական «Փյունիկ» հիմնադրամի նվերն է՝ ի նշան հայ-լեհական դարավոր բարեկամության: Խաչքարի ճակատային մասում կատարված փորագրության լեհերեն տեքստում ասվում է. «Հայաստանում ստեղծված քար» խաչը՝ խաչքարը, հայկական մարդկային ռեսուրսների զարգացման «Փյունիկ» հիմնադրամի նվերն է՝ որպես հայերի և լեհերի քազմադարյա բարեկամության նշաններ: Գրաբարով տեքստոր աղորք է առ Աստված. «Տէր մեր Յիսուս Քրիստոս որդի Աստուծոյ փրկեա եվ պահպանեա ինձ քազմամելիս»[17]:

Խաչքարի բացման հանդիսավոր արարողությանը մասնակցում էին Լեհաստանում ՀՀ դեսպան Աշոտ Գալյուսնը, Գդանսկի քաղաքապետ Պավել Աղամովիչը, քաղաքային խորհրդի նախագահ Բոգդան Օլեշեկը, խաչքարի տեղադրման կազմակերպիչ լեհահայ Ակադիչ Գագիկ Պարսամյանը, խաչքարի հեղինակ Տարոն Մարտիրոսյանը, լեհական իշխանությունների և լեհահայ համայնքի քազմաթիվ անդամներ: Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքի Հայ Առաքելական եկեղեցու Եպիսկոպոս Սերովակ Իսահանյանը և տեղի հայ կաթոլիկ եկեղեցու քահանա Զեզարի Անուշկիչը կատարեցին խաչքարի օծումը, որն ավարտվեց հայկական ավանդական երգով ու պարով[18]:

Լեհաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանության բակում կանգնեցված խաչքարը դարձավ թվով չորրորդը, որի բացումը հանդիսավոր բնույթ չի կրել: Հերթական խաչքարը տեղադրվեց 2011 թվականի հուլիսի 9-ին՝ Գլիվիցե քաղաքում՝ Սուլր Երրորդություն եկեղեցու մոտի[19]: Խաչքարի բացման արարողությունը կազմակերպվել էր խաչքարի տեղադրման նախաձեռնող Գագիկ Պարսամյանի, Թաղեուշ Իսակովիչ-Զալեսկու, հարավյախն Լեհաստանի հայ կաթոլիկ ծիսական խորհրդի և Գլիվիցեի արքա Յոզեֆ Թեոդորովիչի անվան լեհահայերի միության ջանքերով: Խաչքարը հայկական Արվեստ առանց սահմաններէ հիմնադրամի նվերն է: Այն քանդակված է հայկական տուֆից և Լեհաստան է հասել օդային ճանապարհով՝ ՀՀ պաշտպանության նախարարության օժանդակությամբ: Խաչքարի վրայի հայերեն և լեհերեն արձա-

ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

նագրությունում նշված է. ՚Ի իշխատակ նահատակաց հնոց եվ նորոց հայոց եվ լեհացե: [20] Խաչքարի օժման արարողությանը ներկա էին Հայ Առաքելական եկեղեցու Պոկրահնայի թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Գրիգորիս Բունիաթյանը, Լեհաստանի հյուսիսային մասի հայ Կաթոլիկ եկեղեցու քահանա Յեզարի Աննուսկիչը, Լվովի Հայ Առաքելական եկեղեցու քահանա Թաղևոս Գևորգյանը, Լեհաստանի հարավային մասի հայ Կաթոլիկ եկեղեցու քահանա Թաղենուշ Խաչովիչ-Զալեսկին, ինչպես նաև հրոմեակաթոլիկ եկեղեցու սպասավորներ՝ Գլիխցեի քահանաներ Բեռնարդ Ֆրանկը և Բեռնարդ Պլուշիկը [21]: Լեհաստանում << դեսպան Աշոտ Հովակիմյանը հանդես եկավ երյոթվ՝ անդրադարձալով հայ-լեհական հարաբերություններին [22], իսկ Թաղենուշ Խաչովիչ-Զալեսկին իր հուզիչ խոսքում նշեց. «Սա մեծ տոն է: Հայ ժողովուրդը մեզ ընծայեց խաչքար՝ հիշեցնելով մեր համատեղ ավանդույթները» [23]: Խաչքարի բացման պատիկն ընճեռնվեց «Արվեստ առանց սահմաններ» հիմնադրամի ներկայացուցչին ու Գլիխցեի փոխքաղաքապետ Ռենատա Կարամին [24]: Արարողությանը հայկական շունչ հաղորդեց հասորուկ այդ արիթով Երևանից ժամանած, Նազանին պարի խումբը [25]:

Աշխարհի հայ նկարիչների միության նախաձեռնությամբ և ,Արմենտելէ ընկերության աջակցությամբ Լեհաստանի և երկու քաղաքներում հայկական խաչքարեր տեղադրվեցին 2012 թվականի սեպտեմբերին [26]: Չույզ խաչքարերն իրենց տեղը գտան Կերերարկ Վելիկի և Վրոցլավ քաղաքներում: Հայկական հրաբխային տուֆի նույն կտորից քանդակված երկվորյակե խաչքարերի հեղինակներն են Տարոն Մարտիրոսյանը և Բագրատ Բալաբեկյանը: Կերերարկ Վելիկիում տեղադրված խաչքարը, որ խորհրդանշում է հայ-լեհական բարեկամությունը և լեհերի՝ Հայաստանին ցուցաբերած բժշկական օգնության համար երախտագիտությունը, հանդիսավորությամբ բացվեց 2012 թվականի սեպտեմբերի 15-ին [27]: Խաչքարը տեղադրվեց Կերերարկ Վելիկի Սուլր Խաչի Հայտնության և Սուլր Մարիամ Աստվածածնի Ծնունդի եկեղեցու բակում՝ Սուլր Խաչի մասունքի գահակալության տարելիցին, որ եկեղեցին ստացել էր Հռոմի պապ Հովհաննես Պողոս Երկրորդից [28]: Խաչքարի բացման արարողությանը մասնակցում էր Լեհաստանում << դեսպան Աշոտ Գալյոյանը, ով երախտագիտություն հայտնելով հուշակոթողի կանգնեցման առթիվ, մասնավորապես նշեց. ,Սենք Երախտապարտ ենք լեհ ժողովուրդին, որ այդքան շատ հայեր է հյուրընկալելէ [29]: Խաչքարի օժման կարգն իրականացրեց արքեպիսկոպոս Էդմոնդ Պիշչը [30]: Միջոցառումն ուղեկցվեց «Սուսալեռ» խմբի համերգով:

Սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի Հանրապետության անկախության օրը, երկրորդ խաչքարի բացման արարողությունը տեղի ունեցավ Վրոցլավ քաղաքում [31]: Այստեղ հայկական խաչքար տեղադրելու մասին խոսակցություններ էին գնում դեռևս 2011 թվականից: Վրոցլավյան, երկվորյակե խաչքարը կանգնեցվեց քաղաքի կենտրոնական մասում գտնվող Ղոմինիկյան Եղբայրության Մր. Վոյչեշի եկեղեցու հարևանությամբ: Խաչքարի վրայի լեհերեն տեքստը ներկայացնում է խաչքարի կանգնեցման նպատակը, որտեղ ասվում է. «Խաչքարը նվիրված է Լեհաստանում հայերի բազմադարյան ներկայությանն ու հայերի Յեղասահանությանը թուրքիայում, հայերին ու լեհերին Արևելքի սահմաններին՝ 20-րդ դարում» [32]: Խաչքարի տեղադրման աշխատանքներն իրականացրեց լեհահայ Արարատ Բոչարյանի շինարարական կազմակերպությունը [33]: Ականատեսները նշում են, որ դեռևս աշխատանքներն ամբողջովին չավարտած, խաչքարն իր փոքրիկ այգով աղոթատեղի էր դարձել ոչ միայն հայերի, այլև լեհերի համար: Խաչքարի բացման հանդիսավոր արարողության առաջին մասը Հայաս-

ՄԵՐՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

տանից հրավիրված՝ Մուսա լեռէ երգախմբի համերգն էր, իսկ արարողությունը ղեկավարում էր Լեհահայերի ընկերության ղեկավար Աղամ Դոմանաշկիչը, ով հակիրծ ներկայացրեց հայ ժողովրդի պատմությունը և խաչքարերի կանգնեցման խորհուրդը[34]: Արարողությանը ներկա էին Լեհաստանում << ղետպան Աշոտ Գալոյանը, փոխվոյեվոր Եվա Մանկովսկան, Լեհաստանի խորհրդարանի, մշակույթի նախարարության, Վրոցլավի քաղաքապետարանի ներկայացուցիչներ, հոգևոր գործիչներ, Աշխարհի հայ նկարիչների միության համանախազահները, «Արմենտել» ընկերության գլխավոր տնօրենը, լեհահայեր տարբեր վայրերից: Իր խոսքում Եվա Մանկովսկան նշեց. «Մենք բոլոր ցանկանում ենք, որ այս խաչքարը լինի Լեհաստանում հայերի ներկայության հավերժական նյութական խորհրդանշը Ներքին Սիլեզիայում: Հաճելի է, որ դուք հավատարիմ եք ձեր նախնիներին և ձեր մշակույթի սերմանմանը: Այդպիսով դուք նպաստում եք հանդուրժող և բաց հասարակության ստեղծմանը՝ ձեր երազանքների քաղաքք կառուցելու համար»[35]: Աշխարհի հայ նկարիչների միության համանախազահ Դազար Միրզոյանն իր հերթին նշեց. «Խաչքարը՝ հայ ազգի, նրա պատմության և կրոնի ամենահայտնի կերպարն է և ամենաճանաչված խորհրդանշը: Դարեր ի վեր, առ այսօր խաչքարը հանդիսանում է ոչ միայն հայկական արվեստի հուշարձան, այլ նաև ազգի զգու արտահայտություն, որը կղաքնա հայ և լեհ ժողովուրդների ևս մեկ խորհրդանշ»[36]: Խաչքարի օծման արարողությունն իրականացրին լեհահայ քահանա թաղեուշ Խսակովիչ-Զալեսկին և քահանա Անջել Բույնովսկին[37]: Արարողությունից հետո թաղեուշ Խսակովիչ-Զալեսկին պարգևատրվեց Սր. Գրիգոր Լուսավորիչ մեդալով: Վրոցլավում տեղադրված խաչքարը հիմք հանդիսացավ, որպեսզի հարակից փոքրիկ պուրակը անվանակոչվի Հայկական հրապարակ և հանդիսավոր պայմաններում բացվի 2015 թվականի սեպտեմբերի 29-ին[38]:

2013 թվականը լեհահայերի համար նշանավորվեց ևս երկու հայկական խաչքարերի տեղադրումով: Վարչավայի Սադիրա քաղամասում՝՝Պովսինսկա և Օլեբնժնա փողոցների հարևանությամբ գտնվող կանաչ այգում՝ 2013 թվականի հունիսի 25-ին տեղի ունեցավ հայկական խաչքարի հանդիսավոր բացման արարողություն, իսկ այգին անվանակոչվեց Հայկական պուրակ: Խաչքարը Հայաստանի Հանրապետության նվերն է Վարչավային, որ պատրաստված է հայկական և տուֆից և բերվել է Հայաստանից: Խաչքարի բացման արարողությանը մասնակցում էին << նախազահ Սերժ Սարգսյանը, << արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, Լեհաստանի նախազահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Յարոմիր Սոկոլովսկին, Վարչավայի քաղաքապետ Հաննա Գրոնկիլիչ-Վալդը, Մոկոտովի քաղաքետ Բոգդան Օլեսինսկին և բազմաթիվ այլ իյուրեր: Խաչքարի բացման պատճենը ընձեռնվեց Էդվարդ Նալբանդյանին և Համանա Գրոնկիլիչ-Վալդին: Կերպին իր ելույթում, անդրադառնայով Լեհաստան նոր զաղթած հայերի խնդրին, ասաց. «Հուսով եմ, որ Վարչավան նրանց համար նոր տուն կլինի, որտեղ նրանք իրենց կզան ինչպես սեփական տանը, իսկ այս պուրակը կլինի այն վայրը, որը նրանց կիշեցնի լեհ և հայ ժողովուրդների բազմադարյա հարաբերությունների մասին» [39]: Իր հերթին Էդվարդ Նալբանդյանը նշեց, որ «Հայկական պուրակը նոր հրաշալի է բացում հայ-լեհական բարեկամական հարաբերություններում» [40]: Խաչքարի օծման կարգը կատարեցին Եպիսկոպոս Թաղեուշ Պիկուսը և Տաճատ աբեղա Ծառությանը[41]:

2013 թվականի նոյեմբերի 10-ին հերթական խաչքարը բացվեց Լոձում՝ Գոլլանսկա փողոցի հարևանությամբ գտնվող Ամենասուրբ Կույս Մարիամ հրոմեակաթոլիկ Եկեղեցու բակում[42]: Այն կանգնեցվել է Լոձ քաղաքի ծխական խորհրդի ատենապետ

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Վարագդաս Թորոսյանի ջանքերով և հայության հանգանակած միջոցներով՝ ի հիշատակ Յեղասպանության զոհերի հիշատակի[43]: Հուշարձանն իրենից ներկայացնում է բազալտ հիմքի վրա վարդագույն տուֆից քանդակած խաչքար՝ ավանդական զարդանախշերով և հավերժության խորհրդանշով: Խաչքարի աջ և ձախ կողմերում հայերեն և լեհերեն ցուցատախտակներ են, որոնք ներկայացնում են, թե ինչ առիթով և ում կողմից է կանգնեցվել խաչքարը: Գրաբար արծանագրությունն ասում է. «Կանգնեցրին զիսչքարս զայս հայորդիք բնակեալը ի Լոձ նահանգի որպես զաղօթս մշտաբարբառս վասն հոգւոյն նահատակ հայորդեաց որք կոտորեցան ի ծերս թրքական կառավարութեան յամի տեսան 1915 յերկրին գրավեալ Արեւմտեան Հայաստանի. ողորմեաց Տէր հոգւոյն նահատակաց ցեղասպանութեան» [44]: Համանման բովանդակություն ունի նաև լեհերեն տեքստը:

Խաչքարի բացման արարողությանը ներկա էին տեղական իշխանությունների, Լոձի արքեպիսկոպոսության ներկայացուցիչներ, դիվանապետ Հայր Յարովավ Պատերը, Հայր Ռոմուալդ Յենդրաչեկը, հայ համայնքի և ծխական խորհրդի անդամներ Լոձից և այլ վայրերից: Խաչքարի օրինության կարգը կատարեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու լեհահայոց հոգևոր հովիկ Տաճան աբեղա Ծաստուրյանը, որից հետո տեղի ունեցավ հայկական աղոթատեղիքի բացման արարողություն[45]: Իր խոսքում Տաճան արքա Ծաստուրյանը նշեց, որ հայ մարդ լեհաստանում առաջին անգամ ունեցավ իր հոգու աղոթավայրը, որպիսին մինչ այդ չկար ողջ Երկրի տարածքում[46]: Հայր Յարությավ Պատերը Լոձի արքեպիսկոպոսի անունից մաղթեց, որ Թադէոս և Բարդուղիմեոս առաքյալների և Սուրբ Գրիգոր Լուսավորչի բարեխոսությամբ լեհահայերը հաստատուն պահեն իրենց հավատքն ու ազգային ինքնությունը: Արարողության վերջում տեղի ունեցավ օրինված մատաղի հյուրափոխուն, որ կազմակերպվել էր Լոձի հայ համայնքի նախագահ Արսեն Էղիզարյանի ջանքերով և բազմաթիվ հայերի մասնակցությամբ[47]:

2016 թվականի հունիսի 4-ին՝ լեհաստանի Պոլանուվ քաղաքի մոտ գտնվող Սուրբ լեռն կոչվող սրբավայրում, տեղի ունեցավ հայկական և մեկ խաչքարի բացման և օծման արարողություն[48]: Խաչքարը ծնունդով ջավախսքի Ավանյան ընտանիքի նվերն է՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանության զոհերի: Խաչքարի կանգնեցման վայրը պատահական չէ ընտրված: Կաթոլիկ հավատացյալների համար սուրբ լեռ համարվող այդ վայրում ամենուր պաշտամունքի առարկաներ են ու սրբապատկերներ[49]: Վյոթ օրվանից Ավանք՝ ամեն տարի՝ հունիսի առաջին շաբաթ օրը, հայությունը ուխտագնացություն է կազմակերպում դեպի «Սուրբ լեռ», որը լեհական մամուլը համեմատում է հայերի սրբազն Արարատ լեռան հետ՝ անվանելով այն «փոքր Արարատ կամ լեհական Արարատ» [50]:

Բազալտից քանդակված պոլանուվյան խաչքարը լեհահայ Գրիգոր Ավանյանի և իր որդու՝ Ռաֆայել Ավանյանի գործն է: Երկիարկանի հիմքի վրա դրված խաչքարի կենտրոնում ուկեգույն եզրերով խաչ է, իսկ ամեն կողմում՝ մեկական փոքր խաչ: Խաչի գլխային մասի կենտրոնում Արարատ լեռն է, որի ծախ կողմում Սրբ Էջմիածին եկեղեցու մանրակերտն է՝ «Էջմիածին», իսկ աջ մասում՝ Գանձայի Սրբ Կարապետ Եկեղեցունը՝ Զավախսք Վերտառություններով: Խաչի ներքին մասում՝ շրջանակի մեջ, անմոռուկ է՝ Ցեղասպանության 100-րդ տարեկիցի խորհրդանիշը, որի վերին և ներքին մասերում շրջանաձև գրված են՝ «1915-2016*101-GENOCIDE»: Խաչքարի Երկիարկ հիմքի ստորին հատվածում գրված է. «Հիմնադիր եկա կատարող Ծիրացի Գրիգոր Ավանյան, 10, V, 2016», իսկ վերևի մասում քանդակված է ուկեզօծ հավերժության նշան:

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Խաչքարի աջ մասում հայերեն և լեհերեն գրված է. «Հայկական խաչքար: Կանգնեցվել է ի հիշատակ 1915 թվականին Օսմանյան Կայսրությունում իրագործված Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների»[51]: Խաչքարի բացման արարողության ժամանակ << դեսպան է. Ղազարյանն իր ելույթում նշեց. «Մեզ համար չափազանց կարևոր իրադարձություն է, որ խաչքարը տեղադրվում է այն ամսում, երբ Հռոմի պապ Ֆրանցիսկոս մենում է Հայաստան: Մենք հիշում ենք նաև Հովհաննես Պողոս Երկրորդի այցը Հայաստան 2001 թվականին, երբ նշում էինք Քրիստոնեության ընդունման 1700-ամյակը» [52]: Այնուհետև լեհահայոց հոգևոր հովիվը կատարեց խաչքարի օժման կարգ, իսկ խաչքարի հեղինակ Գրիգոր Ավանյանը շնորհակալական խոսք ասաց[53]:

Լեհաստանի տարածքում ցայսօր կանգնեցված վերջին խաչքարը օծվել է 2017 թվականի օգոստոսի 14-ին՝ Լյուբլին քաղաքում[54], որը խորհրդանշում է հայ-լեհական բարեկամությունը: Խաչքարը տեղադրվել է Լյուբլինի կենտրոնում՝ հին քաղաքի Յան Կոհանովսկի փողոցի վրա՝ Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու մոտ[55]: Խաչքարը քանդակված է հայաստանյան վարդագույն տուֆից և առավել վեհաշուր տեսք է ստացել հայկական պամաճական զարդարանդակների կիրառմամբ: Հուշարձանի պատվանդանին լեհերենով փորագրված է. «Խաչքար. Հայ-լեհական բարեկամության քար» խաչ: Լեհաստանում Հայաստանի դեսպան Էդգար Ղազարյանի նվերը Լյուբլին քաղաքի հիմնադրման 700-ամյակի առիթով: 14 օգոստոսի, 2017 թ. ե[56]: Խաչքարի բացման հանդիսավոր արարողությանը ներկա էին << դեսպան Էդգար Ղազարյանը, Լյուբլինի քաղաքապետ Քշշտով Ժուկը, և կառավարության Ազգային ու էթնիկ փորձամասնությունների համատեղ հանձնաժողովում հայ փոքրամասնության ներկայացուցիչ Էդվարդ Միեր-Շնոդեյովիչը, << Ազգային ժողովի պատզամավոր Աշոտ Արտեմյանը, Հայ Արաքեական Սուրբ Եկեղեցու լեհահայոց հոգևոր հովիվ Տաճատ արեղա Ծատուրյանը և քազում այլ հյուրեր[57]: Լյուբլինի քաղաքապետն իր խոսքում շնորհակալություն հայտնեց իրենց քաղաքի հորենյանի առջիվ հայ և լեհ ժողովուրդների դարավոր բարեկամությունը խորհրդանշող յուրօրինակ հուշարձան նվիրաբերելու համար, հավելելով, որ այդ նույն տարում երկու մեծ իրադարձությունների տարեդարձներ են լրանում՝ Լյուբլինի հիմնադրման 700 և հայերի՝ Լեհաստանում հաստատման 650-ամյակները[58]: << դեսպան Էդգար Ղազարյանը, գոհունակություն հայտնելով քաղաքային իշխանությունների կողմից այդ խորհրդանշական նվերը ընդունելու համար, միաժամանակ նշեց, որ խաչքարը Հայաստանի և ողջ հայության նվերն է Լյուբլինին և խորհրդանշում է հայկական ժամանակակից հետո Տաճատ արեղա Ծատուրյանը Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու հոգևոր սպասավոր Ղարիուշ Բոնդիրայի հետ կատարեց խաչքարի օժման կարգ, որից հետո Լյուբլինի Կայրոսն երգախումբը հանդես եկավ համերգով:

21-րդ դարի սկիզբը լեհահայության կյանքում նշանավորվեց մեկ տասնյակից ավելի հայկական խաչքարերի տեղադրմամբ և հայկական հրապարակների անվանակոչմամբ: Լեհաստանի Հանրապետությունում կանգնեցված խաչքարերը, անկախ տեղադրման վայրից, գերազանցապես խորհրդանշում են հայ-լեհական բարեկամական հարաբերությունները և նվիրված են Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Դրանք հայկական հարուստ մշակույթի ինքնատիպության, Լեհաստանում հայ համայնքի առաջնորդացի, տեղի հայության կողմից ազգային ավանդույթների պահպան ապացույցներ են: Խաչքարերը նոր երևույթ են հայ-լեհական հարաբերություններում և կարող են ազդեցություն ունենալ երկկողմ հարաբերությունների ամրապնդման ու հայապահպանության գործում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Збигнев Ш., Армянские хачкары в Польше: Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները. հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի գեկուցումների ժողովածու, Եր., 2014, էջ 418:
2. Хшонщевски Я., Польские армяне и их шаккар в Кракове, Анив, N 3 (3), 24.06.2006.
3. Կրակովում կրացվի Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձան, 6. 04. 2004, <http://panarmenian.net/arm/news/10192>
4. G.Gorny, Spór o ludobojswo. „Przewodnik Katolicki”, nr. 15/2004.
5. Яцек Хшонщевски, указ.соч., Анив, N 3 (3), 24.06.2006.
6. Նոյն տեղում:
7. Նոյն տեղում:
8. Նոյն տեղում:
9. Նոյն տեղում:
10. Збигнев III., указ. соч., стр. 417:
11. Хшонщевски Я., , указ. соч., Анив, N 3 (3), 24.06.2006.
12. Chrząszczewski Jacek, Project chaczkaru ormiańskiego przy kościele św. Mikołaja w Krakowie, „Biuletyn Ormiańskiego Towarzystwa Kulturalnego”, nr. 34-35, 2003, str. 3-10; http://www.otk.armenia.pl/new/chaczqar_idea.html
13. Хшонщевски Я., , указ. соч., Анив, N 3 (3), 24.06.2006.
14. Збигнев III., указ. соч., стр. 417:
15. Նոյն տեղում:
16. Ormianie w Gdańsku mają swój chaczkar, Awedis, nr. 1 – Jesień, 2009, էջ 1:
17. Ormianie w Gdańsku mają swój chaczkar, Awedis, nr. 1 – Jesień, 2009, էջ 1:
18. Նոյն տեղում:
19. W Gliwicach stanął chaczkar, Awedis, nr. 7 – Lato, 2011, էջ 1:
20. <http://serwer1492976.home.pl/isakowicz/index.php?page=news&kid=8&nid=4487>
21. W Gliwicach stanął chaczkar, Awedis, nr. 7 – Lato, 2011, էջ 8:
22. Oreł Joanna, W gliwickiej ormiańskokatolickiej parafii pw. Świętej Trójcy poświęcono ormiański chaczkar, 07.10.2011: <http://www.dziennikzachodni.pl/artykul/425157,krzyz-ormianski-trafil-do-gliwic,id,t.html>
23. W Gliwicach stanął chaczkar, Awedis, nr. 7 – Lato, 2011, էջ 8:
24. Նոյն տեղում:
25. Նոյն տեղում:
26. Նոյն տեղում:
27. Bliźniaczy kamienny krzyż, Awedis, nr. 12 – Jesień, 2012, էջ 2;
<https://www.panorama.am/am/news/2012/10/01/amentell/670961>;
<http://www.panarmenian.net/arm/news/125390/>
28. Նոյն տեղում:
29. Նոյն տեղում:
30. Katarzyński Władysław, Klebark Wielki. Chaczkar z Armenii odsłonięty i poświęcony, 17.09.2012, <http://mojemazury.pl/122832,Klebark-Wielki-Chaczkar-z-Armenii-odslonietysti-poswiecony.html#axzz57IaMKsrI>
31. Նոյն տեղում:
32. Spotkaliśmy się we Wrocławiu, Awedis, nr. 12 – Jesień, 2012, էջ 1, 6:
33. Նոյն տեղում:
34. Spotkaliśmy się we Wrocławiu, Awedis, nr. 12 – Jesień, 2012, էջ 6:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀԾՈՅՑ ՀԱՍԱԼԱՄԱՐՄԻ ԻՌԱԾՈՒ 2018

35. Նոյն տեղում:
36. Spotkaliśmy się we Wrocławiu, Awedis, nr. 12 – Jesień, 2012, էջ 6:
37. PanArmenian Net, Լեհաստանի երկու քաղաքներում խաչքարեր են տեղադրվել, 01.10.2012, <http://www.panarmenian.net/arm/news/125390/>
38. Spotkaliśmy się we Wrocławiu, Awedis, nr. 12 – Jesień, 2012, էջ 6:
39. Otwarcie Skweru Ormiańskiego we Wrocławiu, Awedis, nr. 24 – Jesień, 2015, էջ 5:
40. Chaczkar ozdobą Skweru Ormiańskiego w Warszawie, Awedis, nr. 15 – Lato, 2013, էջ 1:
41. Prezydent Armenii odwiedził “Skwer Ormiański” w Warszawie, Dzieje.pl, Portal historyczny, 25.06.2013. <http://dzieje.pl/aktualnosci/prezydent-armenii-odwiedzil-skwer-ormianski-w-warszawie>
42. Chaczkar ozdobą Skweru Ormiańskiego w Warszawie, Awedis, nr. 15 – Lato, 2013, էջ 3:
43. W Łodzi stanął ormiański krzyż – chaczkar, Awedis, nr. 16 – Jesień, 2013, էջ 1;3:
44. Նոյն տեղում:
45. Նոյն տեղում:
46. Նոյն տեղում:
47. Նոյն տեղում:
48. Նոյն տեղում:
49. Polski Ararat pod Polanowem, Awedis, nr. 27 – Lato, 2016, էջ 3:
50. Նոյն տեղում:
51. Նոյն տեղում:
52. Polski Ararat pod Polanowem, Awedis, nr. 27 – Lato, 2016, էջ 3; Karolina Pawłowska, Nasz mały Ararat, 05.06.2016: <http://info.wiara.pl/doc/3210003.Nasz-maly-Ararat>; Franciszkanie, Chaczkar na górze Polanowskiej, 6.06.2016: <http://www.franciszkanie.gdansk.pl/2016/06/06/chaczkar-na-gorze-polanowskiej/>
53. Polski Ararat pod Polanowem, Awedis, nr. 27 – Lato, 2016, էջ 3:
54. Pawłowska Karolina, Nasz mały Ararat, 05.06.2016: <http://info.wiara.pl/doc/3210003.Nasz-maly-Ararat>
55. Polski Ararat pod Polanowem, Awedis, nr. 27 – Lato, 2016, էջ 3:
56. Odsłonięcie chaczkaru w Lublinie, Awedis, nr. 32 – Jesień, 2017, էջ 6:
57. Նոյն տեղում:
58. Նոյն տեղում:
59. Odsłonięcie chaczkaru w Lublinie, Awedis, nr. 32 – Jesień, 2017, էջ 6:

ԱՄՓՈՓԱԳԻՐ Հայկական խաչքարերը Լեհաստանի Հանրապետությունում Հենրի Մատինյան

Սույն հոդվածում ներկայացված են Լեհաստանի Հանրապետությունում կանգնեցված հայկական խաչքարերի պատմությունը, տեղադրման շարժադրիթ և խորհուրդը: Որպես կանոն՝ բոլոր այդ խաչքարերը նվիրված են հայ-լեհական բարեկամական հարաբերություններին և խորհրդանշում են Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը: Օգտագործելով գերազանցապես լեհական աղբյուրներ՝ հեղինակը մանրակրկիտ ուսումնասիրությամբ վեր է լուծում խաչքարերի տեղադրման հետ կապված մանրամասները: Հարկ է նշել, որ խաչքարերը նոր երևոյթ են հայ-լեհական հարաբերություններում և կարող են իրենց ուրույն դերն ունենալ երկկողմ հարաբերությունների սերտացման գործում:

РЕЗЮМЕ

Армянские хачкары в Республике Польша
Генри Матинян

Ключевые слова: Армения, Польша, армяно-польские отношения, армянские хачкары, польско-армянская община, польско-армянская епархия, армянская культура, польско-армянская дружба, польско-армянское наследие, армянская улица, армянская площадь

В этой статье описывается история, мотив и символ установления армянских хачкаров, возведенных в Республике Польше. Как правило, все эти хачкары посвящены армяно-польским дружеским отношениям и символизируют память о невинных жертвах Геноцида армян. Используя в основном польские источники, автор тщательно анализирует детали установки хачкаров. Следует отметить, что хачкары являются новым явлением в армяно-польских отношениях и могут играть свою роль в повышении двусторонних отношений.

SUMMARY

Armenian khachkars in the Polish Republic.

Henry Matinyan

Keywords: Armenia, Poland, Armenian-Polish relationship, Armenian khachkars, Polish-Armenian community, Polish-Armenian diocese, Armenian culture, Polish-Armenian friendship, Polish-Armenian heritage, Armenian street, Armenian square

The article presents the history, motive and purpose of the placement of Armenian khachkars erected in the Republic of Poland. As a rule, all those khachkars are dedicated to the Armenian-Polish friendly relations and symbolize the memory of the Armenian Genocide's innocent victims. Using predominantly Polish sources, the author thoroughly investigates the details of the khachkars' installation. It is worth mentioning that khachkars are a new phenomenon in the Armenian-Polish relations and may have their own role in raising bilateral relations.